

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԱԲԿԻՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ – ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ



**ՏՂԱ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ
ՍԵՌԱԿԱՆ ՀԻՓԻԵՆԱՆ ԵՎ ԽՆԱՄՔԸ**

Ծնողական ուղեցույց

1) Ի՞նչ հատուկ խնամք է պահանջվում տղա երեխաների համար:

Նորածնային շրջանում և մանկական հասակում տղա երեխաների սեռական հիգիենան և խնամքը չափազանց հեշտ են: Ամենալավ խորհուրդն է. «Լվա՛ այն, ինչ երևում է»: Մանկական տարիքում միայն դրսից կանոնավոր լվացումը գուլ ջրով միանգամայն բավական է:

2) Ի՞նչ է այն սպիտակ նյութը, որն առաջանում է թլիփի տակ:

Թլիփի տակ արտադրվող նյութը կոչվում է սմեգմա (հունարեն՝ օձառ): Սմեգման բնական փափկացուցիչ նյութ է, որն օժտում է առնանդամի գլխիկը և թլիփը: Այն արտադրվում է թե՛ աղջիկների, և թե՛ տղաների մոտ: Նորածնային շրջանում, երբ թլիփը միահյուսված է գլխիկին, սմեգման դուրս է գալիս թլիփի բացվածքից սպիտակ մանր բյուրեղիկների տեսքով: Ոչ մի դեպքում սմեգման չպետք է դիտարկել որպես գրգռիչ, քաղցկեղածին կամ ոչ հիգիենիկ նյութ: Սմեգման օգտակար է և ունի հակաբակտերիալ, հակավիրուսային հատկություններ: Այն մաքրում և օժում է գլխիկն ու թլիփի ներքին շերտը՝ գլխիկի լորձաթաղանթը պահելով փափուկ և էլաստիկ: Սմեգման պետք է վանալ մեղմ մանկական օձառով:

3) Եթե երեխայի մոտ միզելիս թլիփը փուչիկի նման ուռչում է, ապա կարիք կա՞ որևէ միջամտության:

Ոչ՛: Չբացվող թլիփը կարող է միզելիս փուչիկի նման ուռչել: Սա միջամտություն չի պահանջում, պետք չէ փորձել թլիփը ետ քաշել միզելու ֆունկցիան «կառավարելու» համար:

Սակայն, եթե միվարձակությունը ցավոտ է, դժվարացած (երեխան միպում է ուժի գործադրումով), շիթը բարակ է կամ մեկը դուրս է գալիս կաթիլներով, անհրաժեշտ է դիմել բժշկի:

4) Արդյո՞ք կարիք կա բացելու տղա երեխայի սեռական օրգանի ծայրամաշկը:

Ո՛չ: Հաճախ ծնողները փորձում են ստուգել երեխայի թլիփի բացվածությունը և հետզհետե այն ետ տանել: Դրա կարիքը չկա. թլիփը բացելու ոչ մի փորձ չպետք է արվի՝ ուժով կամ նույնիսկ «պզուշորեն»: Սեռական օրգանի գլխիկի ծածկույթը, որը կոչվում է թլիփ, նորածնային հասակում և մանկությունում միահյուսված է գլխիկին միակցական թաղանթով: Սա գործնական նշանակություն ունի. նորածնային և մանուկ հասակում թլիփը պաշտպանում է նուրբ գլխիկը մեխանիկական վնասվածքից, ինչպես նաև մեկի և կեղտի գրգռիչ

(ամոնիակային) միջավայրից: Ուժով ետ քաշումը գլխիկից կարող է առաջացնել թաղանթի պատռվածք և արյունահոսություն, ինչպես նաև պատճառ դառնալ ինֆեկցիաների, բորբոքումների և սպիական կպումների: Ուժով ետ քաշումը կարող է առաջացնել ծայրահեղ այտուց, օղակել գլխիկը և նույնիսկ պատճառ հանդիսանալ թլիփի և գլխիկի մեռուկացման (գանգրենայի):

Բացի ֆիզիկական վնասվածքից, ուժով բացումը կարող է նաև հոգեբանորեն վնասել երեխային: Հետապոտությունները ցույց են տվել, որ սեռական օրգանի վրա ցավոտ բժշկական միջամտություններից հետո երեխաների մոտ կարող է առաջանալ վախ և այլ հոգեբանական բարդույթներ, թե՛ բժշկի, թե՛ ծնողների և թե՛ իր իսկ սեփական սեռական օրգանների նկատմամբ: Էթիկապես ճիշտ չէ, որ բժիշկը կամ ծնողը կատարի անտեղի միջամտություններ երեխայի սեռական օրգանի վրա: Առաջին մարդը, որ թլիփը ետ կտանի, պետք է հենց ինքը երեխան լինի, բանվի նա երբեք չի վնասի ինքն իրեն: Ոսկե կանոն. եթե երեխան կարող է տեսնել առնանդամի գլխիկը, ուրեմն նա բավականաչափ մեծ է և ծնողների կողմից սեռական օրգանի վնասման կարիք չունի: Ինչպես օրինակ էթիկական չէ ստուգել, ուսումնասիրել աղջիկների կուսաթաղանթը, այնպես էլ չի՛ կարելի բացել և վնասել տղայի թլիփի տակ: Բժիշկները և ծնողները պետք է հասկանան, որ առանց որևէ լուրջ ախտանշանի, նրանք երբեք չպետք է ձեռք տան տղայի սեռական օրգանին (բացառությամբ ամորձիների դիրքը ստուգելիս): Թլիփը կբացվի հանկարծակի կամ հետզհետե, ի՛ր իսկ վար-գացման արդյունքում և ի՛ր իսկ տիրոջ օգնությամբ:

5) Իմ երեխայի սեռական օրգանի գլխիկը չի երևում և թլիփի բացվածքը նեղ է: Արդյո՞ք դա «ֆիմոզ» հիվանդությունն է:

Ո՛չ: Ֆիմոզ տերմինը բավական անորոշ հասկացություն է. հարկավոր է հստակ տարբերակում մտցնել նորմալ, դեռևս չբացվող թլիփի, և պաթոլոգիական՝ ձեռքբերովի ֆիմոզի միջև: Մանկությունում և որոշ դեպքերում նույնիսկ պատանեկությունում, թլիփի բնական ետ չբաշվելը չպետք է դիտարկվի որպես խանգարում, ոչ էլ պետք է սխալ կերպով ախտորոշվի որպես ֆիմոզ: Երբեմն բուժաշխատողները միանգամայն առողջ, չբացվող թլիփը սխալմամբ ախտորոշում են ֆիմոզ և դնում են ցուցում թլիփի ուժով բացելու կամ նույնիսկ, պատանեկական հասակում՝ թլիփատման: Հետապոտությունները ցույց են տվել որ «ֆիմոզի» համար թլիփատման ցուցում ստացած երեխաների մոտ 50%-ը գտնվել են սեռական օրգանի տիպիկ նորմալ վարգացման փուլում: Որևէ ախտանշանի բացակայության դեպքում թլիփի ետ չբաշվելը պետք է դիտարկվի որպես բնականոն վարգացման փուլ, որը չի պահանջում որևէ բժշկական միջամտություն նույնիսկ մինչև պատանեկության վերջը:

6) Ո՞րն է իրական ֆիմուզը:

Իրական ֆիմուզը թլիփի բացվածքի սպիական նեղացումն է որը սովորաբար առաջանում է թլիփի կամ գլխիկի կրկնվող բորբոքումների կամ վաղաժամ, ուժով թլիփը ետ քաշելու և պատռվածքներ ու կպումներ առաջացնելու արդյունքում: Իրական սպիական ֆիմուզը համարյա թե անհնար է ձեռք բերել մանկությունում և պատանեկությունում, եթե երեխայի սեռական օրգանը չի ենթարկվել բժշկական կամ ծնողի կողմից պատճառված վնասվածքի: Սպիական գոյացություններից խուսափելու համար անհրաժեշտ է վերծ մնալ երեխայի սեռական օրգանի բնականոն վարգացմանը միջամտելուց:

7) Ո՞ր տախիքում է բացվում երեխայի թլիփը:

Թլիփի բացվելու ոչ մի ճշգրիտ տարիք չկա: Չբացվող թլիփը բնական վիճակ է ինչպես նորածնային հասակում, այնպես էլ մանկության ընթացքում և նույնիսկ, որոշ դեպքերում, նաև մինչև սեռահասունության ավարտը: Տղաների 44%-ի մոտ 10-11 տարեկանում թլիփը ամբողջովին բացվում է, 95%-ի մոտ այն բացվում է մինչև 18 տարեկանը: Թլիփի բացվելու միջին տարիքը 10.4 տարեկանն է: Չբացվող թլիփն, այսպիսով, հիվանդություն չէ և չի՛ պահանջում բուժում:

Եթե պատանեկության վերջում թլիփը դեռ չի բացվում, ապա կարելի է փորձել թլիփի վզույշ ձգման և լայնացման վարժություններ: Լայնացման վարժություններն արդյունավետ են լոգանքի ժամանակ, երբ մաշկը փափուկ է և առաձգական:

8) Իմ երեխայի թլիփի ծայրամասն երբեմն կարմրում է և բորբոքվում: Ի՞նչը կարող է պատճառ հանդիսանալ և ինչպիսի՞ խնամք է պահանջվում նման դեպքերում:

Բորբոքումների կարող են բերել հետևյալ պատճառները.

- Ջրազրկման արդյունքում՝ մեզի խտացում և բյուրեղացում
- Կեղտոտ տակաշորի մեջ երկարատև մնալը
- Փրփուրներով հաճախակի լոգանքները, ուժեղ օձառների և լվացքի փոշիների օգտագործումը
- Ուժեղ քլորացված ջուրը
- Հակաբիոտիկների օգտագործումը
- Բժշկական միջամտությունները:

Այս բորբոքումների առկայության դեպքում կարելի է կիրառել հետևյալ քայլերը.

- Մեզի նոսրացման նպատակով մեծ քանակությամբ ջրի օգտագործում
- Սեռական օրգանը բաց պահել օրվա ընթացքում առանց տակաշորի, որպեսզի այն շփվի օդի հետ (չի վերաբեվրում թլիփը ետ քաշելուն)
- Ցնցուղի փոխարեն, լոգանք կատարել մաքուր, առանց օձառի ջրի մեջ, որպեսզի բյուրեղացված մեզի մասնիկները փափկեն և հեշտորեն դուրս գան
- Ճիշտ կերակրել երեխային՝ սահմանափակելով քաղցրեղենը և փոխարենը ավելացնել կաթնաթթվային մանրէների աղբյուրները՝ մածուն կամ Նարինե՝ բակտերիալ հավասարակշռությունը վերականգնելու համար
- Կատարել լվացում (լոգանք) կերակրի սողայի 25% - ոց լուծույթով
- Զսել Նարինեի/Ացիդոֆիլուսի բուկը ուղղակի թլիփի վրա
- Դադարեցնել և խուսափել որևէ մանիպուլյացիաներից:

Նման բորբոքումների ժամանակ կարիք չկա բացել թլիփը: Վերը նշված բոլոր միջոցառումները պետք է կատարվեն արտաքին մասից:

9) Ո՞ր դեպքերում է անհրաժեշտ անհապաղ դիմել մասնագետի:

Պարաֆիմոզը առնանդամի պաթոլոգիական վիճակ է, որի ժամանակ հետ քաշված թլիփն արգելակվում է գլխիկի ակոսի ետևում, և հնարավոր չի լինում այն առաջ բերել դեպի իր նորմալ, գլխիկը ծածկող դիրք: Պարաֆիմոզը ուրոլոգիական վտանգավոր դեպքերից է և պահանջում է անհապաղ բժշկական օգնություն:

Որոշ սուր վիճակներ, այսպես կոչված «սուր փոշտ», ևս պահանջում են անհապաղ բուժօգնություն: «Սուր փոշտ» արտահայտվում է փոշտի մեկ կամ երկու կեսերի այտուցով, կարմրությամբ և ցավոտությամբ: Ամենատարածված պատճառներն են ամորձու կամ հավելումների ոլորում, բորբոքումներ (էպիդիդիմիտ, օրխիտ), վնասվածք, օղակված ճողվածք, սուր ջրգողություն, որոշ ինֆեկցիոն հիվանդություններ:

Փոշտում ամորձիներից մեկի բացակայության, ինչպես նաև աճուկային շրջանում այտուցվածության կամ արտափքման առկայության դեպքում ևս անհրաժեշտ է դիմել բժշկի:

10) Որոշ երկրներում, ինչպես նաև որոշ հայրենադարձ ընտանիքներում, ընդունված է երեխաներին թլփատել նորածնային հասակում հիգիենայի և հիվանդությունների կանխարգելման համար:

Արդյոք դա օգտակա՞ր է:

Ո՛չ: Թլփատման օգտակարությունը գիտականորեն հիմնավորված չէ, և այդ իսկ պատճառով համաշխարհային տարբեր առողջապահական կազմակերպություններ խորհուրդ են տալիս տղա երեխաներին պերծ պահել այս ոչ բուժական անտեղի վիրահատությունից:

Առաջին հերթին, ոչ պատշաճ անվգայացման պարագայում, թլփատումը մանկահասակ երեխաներին ցավ է պատճառում: Թլփատումով հեռացվում են 10-20 հազար նյարդային վերջույթներ և էրոզեն հյուսվածքներ, որոնք սեռական օրգանի ամենապզայուն մասերն են: Վիրահատությամբ «մերկացված» առնանդամը կորցնում է իր պաշտպանական շերտը. գլխիկի գերպզայուն լորձաթաղանթը ժամանակի ընթացքում վերածվում է եղջերացած մաշկի և կորցնում պզայունությունը:

Ոչ մասնագետի կողմից կատարված թլփատումը կարող է նաև ուղեկցվել այնպիսի վիրահատական բարդություններով, ինչպիսիք են արյունահոսություն, ինֆեկցիա, արյան վարակում, գանգրենա, գլխիկի հատում և հավվադեպ դեպքերում՝ նույնիսկ մահ:

Այսպիսով, տղաների սեռական օրգանի վարգացումը և թլիփի բացվածության աստիճանը անհատական է յուրաքանչյուր երեխայի և պատանու մոտ, և չհիմնավորված ոչ մի փորձ չպետք է կատարվի բացելու առնանդամի թլիփը և խոչընդոտելու նրա բնականոն պարզացմանը: Թլփատումը մարմնահատական վիրահատություն է, լի բացասական հետևանքներով: Թլիփի որևէ բորբոքում կամ հիվանդություն բուժվում է պահպանողական եղանակներով, չվնասելով տղայի սեռական ամբողջականությունը:

«Սուր փոշտի», խանգարված միլարձակության նշանների, ինչպես նաև չիջած ամորձու և աճուկային շրջանում այտուցվածության առկայության դեպքում անհրաժեշտ է անհապաղ դիմել բժշկի:

Մեթոդական ձեռնարկը հրատարակվել է ՀՀ առողջապահության նախարարության պատվերով

Հեղինակներ՝ Աստրիկ Վարդանյան, Սերգեյ Բաբլոյան

Տպաքանակը՝ 500

Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում
Հասցե՝ Կիևյան 18/6